ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 98-Ա

16 հոկտեմբերի 2018թ. գ.Գետահովիտ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԴԱՎԻԹ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գետահովիտ համայնքի 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 17 հասցեում Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից 1989թ. ինքնակամ կերպով կառուցվել է 183.69քմ արտաքին և 127.1 քմ ներքին մակերեսով անասնաշենք՝ 32.1քմ ծածկ, որի սպասարկման և շահագործման հողամասը կազմում է 0.08335 հա :Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. թիվ 727-Ն որոշման, նշված հողամասը համայնքային է փոխանցվել որպես բնակավայրերի նպատակային, այլ հողատեսք գործառնական նշանակությամբ հողամաս /ծածկագիր 11-022-0009-0001/ : Անասնաշենքը և նրա զբաղեցրած հողամասը չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, անասնաշենքը պահելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա,չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք :

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն,18.05.2006թ. 912-Ն, 23.12.2005թ. թիվ 2387-Ն և 17.04.2003թ. թիվ 470-Ն,թիվ որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գետահովիտ համայնքի ավագանու 20.08.2018թ. թիվ 40-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել Գետահովիտ համայնքի սեփականության իրավունքը 11-022-0009*0001 ծածկագրով բնակավայրերի նպատակային, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ համայնքային սեփականություն հանդիսացող 0.08335 հա հողամասի վրա Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված 183.69 քմ արտաքին և 127.1քմ ներքին մակերեսով անասնաշենքի և 32.1քմ ծածկի նկատմամբ :

2. Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից 0.08335 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված անասնաշենքին և ծածկին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, գ. Գետահովիտ 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 17 :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Գետահովիտ համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *07600465*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 99-Ա

29 հոկտեմբերի 2018թ. գ.Գետահովիտ

ԳԵՏԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԴԱՎԻԹ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Գետահովիտ համայնքի 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 17 հասցեում Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից 1989թ. ինքնակամ կերպով կառուցվել է 183.69քմ արտաքին և 127.1 քմ ներքին մակերեսով անասնաշենք՝ 32.1քմ ծածկ, որի սպասարկման և շահագործման հողամասը կազմում է 0.08335 հա :Համաձայն ՀՀ կառավարության 2006թ. թիվ 727-Ն որոշման, նշված հողամասը համայնքային է փոխանցվել որպես բնակավայրերի նպատակային, այլ հողատեսք գործառնական նշանակությամբ հողամաս /ծածկագիր 11-022-0009-0001/ : Անասնաշենքը և նրա զբաղեցրած հողամասը չեն խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, անասնաշենքը պահելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով սահմանված հողերի վրա,չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք :

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ՀՀ <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 731-Ն,18.05.2006թ. 912-Ն, 23.12.2005թ. թիվ 2387-Ն և 17.04.2003թ. թիվ 470-Ն,թիվ որոշման պահանջներով և հիմք ընդունելով Գետահովիտ համայնքի ավագանու 20.08.2018թ. թիվ 40-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ճանաչել օրինական Գետահովիտ համայնքի սեփականության իրավունքը 11-022-0009-0001 ծածկագրով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ համայնքային սեփականություն հանդիսացող 0.08335 հա հողամասի վրա Դավիթ Ռազմիկի Դավթյանի կողմից ինքնակամ կառուցված 183.69 քմ արտաքին և 127.1քմ ներքին մակերեսով անասնաշենքի և 32.1քմ ծածկը :

2.Առաջարկել Գետահովիտ համայնքի 6-րդ փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 17 հասցեում գտնվող 0.08335 հա մակերեսով հողամասի վրա 183.69 քմ արտաքին և 127.1քմ ներքին մակերեսով անասնաշենքի և 32.1քմ ծածկի շինարարությունն իրականացրած Դավիթ Ռազմիկի Դավթյանին ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ գլխի 35-րդ կետի բ/ենթակետի համաձայն ուղղակի վաճառքով գնել 0.08335 հա հողամասը՝ 1քմ՝ 528 դրամ կադաստրային,440100/չորս հարյուր քառասուն հազար հարյուր/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 183.69քմ արտաքին մակերեսով անասնաշենքը և 32.1քմ ծածկը ,ընդամենը 159.2քմ արտաքին մակերեսով՝ 1քմ՝ 2580 ՀՀ դրամ , ընդհանուր արժեքը 410740/չորս հարյուր հազար յոթ հարյուր քառասուն/ՀՀ դրամ, ամբողջ գույքը՝ 850850/ ութ հարյուր հիսուն հազար ութ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Գետահովիտ համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

07600465